ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-22/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 08.10.2021թ.
Ժամը 10[15]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱՎ ապահովման 1-ին բաժնի պետ, գնդապետ՝ Տ. Մաթևոսյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ ՀՋ և Հ վարչության պլանավորման և հաշվառման բաժնի պետ, գնդապետ՝ Գ. Գևորգյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱՎ ապահովման 1-ին բաժնի ավագ մասնագետ՝ Դ. Մաթևոսյան,
ՀՀ ՋՈՒ ՀՋ և Հ վարչության պլանավորման և հաշվառման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ՝ Ա. Պետրոսյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի պետ Վ.Պողոսյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-22/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Վ. Պողոսյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-22/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-22/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

(Վ. Պողոսյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-22/8» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Ֆոտոն» ՍՊԸ
2	«Արագած» ՍՊԸ
3	«Սիս» ՍՊԸ
4	«Նարինե Դավթյան» ԱՁ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 . «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-22/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Վ. Պողոսյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-22/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

«Սիս» ՍՊԸ-ի «Արագած» ՍՊԸ-ի և «Նարինե Դավթյան» ԱՁ-ի հայտերով ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/12» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին): Մասնավորապես՝

«Սիս» ՍՊԸ-ի ներկայացված հայտի բոլոր փաստաթղթերում ընթացակարգի ծածկագիրը սխալ է գրված: Հավելված 1-ում մասնակիցը նշել է որ ցանկանում է մասնակցել Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված գնանշման հարցմանը: Հավելված 1.1-ում տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանվածին: Բացի այդ գնային առաջարկում ապրանքի անվանումը չի համապատասխանում հրավերով պահանջվող ապրանքի անվանմանը: Քանի որ, գնային առաջարկը ենթակե չէ շտկման, հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Սիս» ՍՊԸ-ի հայտը:

«Արագած» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.1-ում բացակայում է արկղի ուրվագծային պատկերը և հատակի կահավորվածության պատկերը: Բացի այդ նրա կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող իրական շահառուների մասին տվյալները:

«Նարինե Դավթյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հավելված 1.1-ում բացակայում է արկղի ուրվագծային պատկերը և հատակի կահավորվածության պատկերը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 08.10.2021թ. որոշեց կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: 12.10.2021թ. շարունակելով նիստը գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «Նարինե Դավթյան» ԱՁ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող շտկումը, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-22/8» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող: «Արագած» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել (ընդհանրապես չի ներկայացրել) պահանջվող շտկումները: Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Արագած» ՍՊԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Վ. Պողոսյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-22/8» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել 3 մասնակիցներ.

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակը	Նախահաշվ. գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների			
					անվանումները	գնային առաջարկները		
						առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը
1	Արկղեր	հատ	80	6,080,000	«Ֆոտոն» ՍՊԸ	4986000	997200	5983200
					«Արագած» ՍՊԸ	5066400	1013280	6079680
					«Նարինե Դավթյան» ԱՁ	5976000		5976000

Ըստ ներկայացված տեղեկությունների «Նարինե Դավթյան» ԱՁ-ն ԱԱՀ վճարող չէ:

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-22/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Վ. Պողոսյան)

4.1 12.10.2021թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-22/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում ընտրված մասնակից ճանաչվեց «Ֆոտոն» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-22/8» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

(Վ. Պողոսյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-22/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Տ. Մաթևոսյան

Գնահատող Գ. Գևորգյան

Գնահատող Դ. Մաթևոսյան

Գնահատող Ա. Պետրոսյան

Գնումները համակարգող՝ Վ. Պողոսյան